ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

«1» ապրիլի 2020թ. № 290-Լ

ՀՐԱՄԱՆ

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵԶՈՔԱՑՄԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄՈՒՄԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության «Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման հինգերորդ միջոցառումը հաստատելու մասին» 2020 թվականի մարտի 26-ի թիվ 359-Լ և Հայաստանի Հանրապետության կառավարության «Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման հինգերորդ միջոցառման շրջանակում տրամադրվող օժանդակության գործիքների կիրառման կարգը հաստատելու մասին» 2020 թվականի մարտի 31-ի թիվ 417-Լ որոշումները՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման հինգերորդ միջոցառման համաձայն միանվագ դրամաշնորհ ստանալու համար դիմումի ձևը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2020 թվականի ապրիլի 2-ից:

4/1/2020

X

ԴԱՎԻԹ ԱՆԱՆՅԱՆ

Signed by: ANANYAN DAVIT 2010710142

ԴԱՎԻԹ ԱՆԱՆՅԱՆ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

Հավելված

Հայաստանի Հանրապետության

պետական եկամուտների կոմիտեի նախագահի

ապրիլի 1-ի N 290 - Լ հրամանի

Ձև

ԴԻՄՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵԶՈՔԱՑՄԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ	
1. Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	
2. Առևտրային կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը	
3. Հարկ վճարողի գտնվելու վայրը (բնակության վայրը)	

Խնդրում եմ Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 26-ի թիվ 359-Լ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 31-ի թիվ 417-Լ որոշումներով սահմանված միանվագ դրամաշնորհի գումարը փոխանցել՝

Բանկի անվանումը, որին պետք է փոխանցել միանվագ դրամաշնորհի գումարը	Բանկային հաշվի համարը, որին պետք է փոխանցել միանվագ դրամաշնորհի գումարը

Սույնով հավաստիացնում եմ, որ ՀՀ կառավարության «Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման հինգերորդ միջոցառման շրջանակում տրամադրվող օժանդակության գործիքների կիրառման կարգը հաստատելու մասին» 2020 թվականի մարտի 31-ի թիվ 417-Լ որոշմամբ հաստատված կարգի 3-րդ և 4-րդ կետերին համապատասխան՝ 01.01.2020 թվականից մինչև 01.04.2020 թվականն ընկած ժամանակահատվածում ունեցել եմ ամսական 2-ից մինչև 50 վարձու աշխատակից և նշված ժամանակահատվածում վճարված աշխատավարձի փաստացի ֆոնդը չի նվազել:

Պաշտոնատար անձ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ